

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հրավերով հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4 օրերին ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը: Նորին Սրբությունը Ս. Էջմիածին էր ժամանել՝ խորհրդակցելու Ամենայն Հայոց Հայրապետի հետ Մայր Հայրենիքում ազգային-հոգևոր կյանքին առնչվող հարցերի մասին և մասնակցելու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդակցական ժողովին: Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը հավաստիացրին, որ ձեռք-ձեռքի տված միասնաբար պիտի օժանդակեն Հիմնադրամի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը ինչպես Հայաստանում, այնպես և Սիյուռքի գաղթօջախներում: